

ՈՐԵՆՔՆԵՐ

ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ՄԱՅՐԵՐԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԱՌ 22 ԼԱՅԻՍԻ 1937 Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ)

362

Խ-11

ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԻՍՆ ԺՈՂԿՈՍԽՈՐՀԻ

362 ս6

Խ-11

2802 - 10

ՈՐԵՆՔՆԵՐ

ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ՄԱՅՐԵՐԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԱՌ 22 ՄԱՅԻՍԻ 1937 Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ)

8

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԽՍՀ ԺՈՂԿՈՍԽՈՐԶԻ

ՅԵՐԵՎԱՆ

1937

1.1 SEP. 2013

43. 278



Законы
о выдаче госпособия
многодетным матерям
(с принятыми изменениями по 22 мая 1937 г.)
Издание СНК Армянск. ССР

**ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՍԻՏԵՅԻ ՅԵՎ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՍԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ**

Աբուրսն արգելելու, ձեռնդրանքներն ցույց տվող նյութական ազնուքյունն ավելացնելու, բազմամղալ ընտանիք ունեցողներին պետական ազնուքյուն սահմանելու, ձեռնդրանքների, մանկամասերի յետ մանկապարտեզների ցանցն ընդարձակելու, ախմեմս չվնասելու համար ֆրեական պատիժն ուժեղացնելու յեվ տմուսնալուծութեան որեւնադրութեան մեջ մի քանի փոփոխութիւններ մտցնելու մասին.

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխութեանը, վոր սկիզբ դրեց ամեն տեսակ դասակարգային շահագործման վոր չընչացման, միաժամանակ սկիզբ դրեց նաև կանանց լիակատար ու վերջնական ազատագրման:

Աշխարհի վոր մի յերկրում կիսն աշխարհի լիակատար իրավահավասարութեան չի վայելում քաղաքական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում և ընտանեկան կենցաղում, ինչպես ԽՍՀ Միութեան մեջ:

Աշխարհի վոր մի յերկրում կիսն, վորպես մայր ու քաղաքացի, վորի վրա մեծ պատասխանատու պարտականութեան և ընկնում՝ ծնելու և դաստիարակելու քաղաքացիներ, աշխարհի հարգանք և որեւնքի պաշտպանութեան չի վայելում, ինչպես ԽՍՀ Միութեան մեջ:

Սակայն յերկրի տնտեսական քաջքայումը, վորը վրա հասավ քաղաքացիական պատերազմից և զինված ինտերվենցիայից հետո առաջին տարիներին, և կանանց կուլտուրական անբավարար մակարդակը, վորը ժառանգութեան եր մնացել մինչհեղափոխական եպոխայից, հնարավորութեան չափին կանանց իսկույն և յեթ լիակատար չափով ոգտագործելու որեւնքի տված իրավունքները և առանց ապագայից յերկրող կրելու կատարելու իրենց պարտականութեանները, վորպես քաղաքացի և մայր, վոր պատասխանատու յի իր յերեխաների ծննդի ու նախնական

դաստիարակութեան համար: Այդ հիման վրա խորհրդային իշխանութիւնը 1920 թվի նոյեմբերի 18-ին թույլ տվեց կանանց աբորտ կատարել (հղիութեան արհեստական ընդհատում) առաջին քանի դեռ, ինչպես գրել եյին Առողջապահութեան Ժողովրդական Կոմիսարիատը և Արդարագատութեան Ժողովրդական Կոմիսարիատը, «անցյալի բարոյական մնացուկները և ներկայիս տնտեսական ծանր պայմանները հարկադրում են կանանց մի մասին դիմելու այդ ոպերացիային» (Որ. Ժող. 1920 թ. № 90, էջ. 471):

Լենինը դեռ 1913 թվականին գրում էր, վոր գիտակից բանվորներն «անպայման թշնամի յեն նոր մալթոսականութեանը, մի հոսանք, քարացած և ինքնասեր քաղքենիական դուրգին հատուկ, վորը վախեցած փնթփնթում է՝ «աստծով մի կերպ պահենք մեր գլուխը, իսկ յերեսա ավելի լավ է չլինի»:

Սակայն Լենինը, ընդոտանալով աբորտի, վորպես սոցիալական չարիքի դեմ, նրա դեմ պայքարելու համար բացահայտորեն անբավարար էր համարում միայն աբորտն արգելող որենքները: Դեռ ավելին՝ նա մատնանշում էր, վոր կապիտալիզմի պայմաններում այդ որենքները միայն արտացոլում են «տիրապետող դասակարգերի կեղծավորութիւնը», վորովհետեւ գրանք «չեն բուժում կապիտալիզմի հիվանդութիւնները, այլ առանձնապես չարորակ, առանձնապես ծանր են դարձնում այդ հիվանդութիւնները կեղծվող մասսաների համար» (հատոր 16, էջ 498—499):

Միայն սոցիալիզմի պայմաններում, վորտեղ բացակայում է մարդու շահագործումը մարդու կողմից և վորտեղ կինը հանդիսանում է հասարակութեան լիակատար իրավատեր անդամը, իսկ աշխատավորների նյութական բարորութեան հարաճիւնը բարձրացումը հասարակական զարգացման որենք է, միայն այնտեղ կարելի յէ լուրջ հիմքի վրա դնել աբորտի դեմ մղվող պայքարը, այդ թվում նաև արգելիչ որենքների միջոցով:

Կապիտալիստական շահագործման վոչնչացումը ԽՍՀ Միութեան մեջ, աշխատավորների նյութական բարեկեցութեան աճումը և քաղաքական ու կուլտուրական մակարդակի հսկայական չափով բարձրանալը—հնարավորութիւն են տալիս արծարծել Առողջապահութեան Ժողովրդական Կոմիսարիատի և Արդարագատութեան Ժողովրդական Կոմիսարիատի 1920 թ. նոյեմբերի 18-ի վորոշումը վերացնելու հարցը:

Մի կողմից՝ կանանց ու յերեսաների անհրաժեշտ նյութա-

կան ապահովումը, բազմանդամ ընտանիքներին պետական ոգնութիւն ցույց տալը, ծննդաբաններին, մանկամասերին ու մանկապարտեզներին ցանցի առավելագույն զարգացումը, որենսդրական կարգով այն նվազագույն դումարի սահմանումը, վորը պատաժոր է վճարել հայրն իր յերեսայի պահպանման համար՝ ամուսինների անջատ ապրելու դեպքում, մյուս կողմից աբորտների արգելումը, միաժամանակ ուժեղացնելով պատիժը յերեսաների պահպանման նպատակով դատարանի սահմանած միջոցները չարամտորեն չվճարելու նկատմամբ և ապահարգանքների որենսդրութեան մեջ մի քանի փոփոխութիւններ մտցնելը՝ ընտանիքին և ընտանեկան պարտականութիւններին թեթևամիտ վերաբերմունք ցուցաբերելու դեմ պայքարելու նպատակով—անհայն ուղիները, վորոնցով պետք է ընթանալ ամբողջ ազգաբնակչութեանը վերաբերող այդ մեծ հարցը լուծելու համար: Այդ տեսակետից Խորհրդային կառավարութիւնն ընդառաջում է աշխատավոր կանանց բազմաթիւ դիմումներին:

Վերոհիշյալի հիման վրա և հաշիւի առնելով նախագծի քննարկման ընթացքում քաղաքացիների արած մի քանի դիտողութիւնները, ԽՍՀ Միութեան կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են.

I. Աբորտն արգելելու մասին

1. Նկատի ունենալով աբորտի ֆիաստարութեան ապացուցված լինելը, արգելել աբորտ կատարելը թե հիվանդանոցներում և թե հատուկ բուժական հաստատութիւններում և թե տանը՝ բժշկների մոտ ու հղի կանանց մասնավոր բնակարաններում: Աբորտ կատարելը թույլ տալ բացառապես այն դեպքերում, յերբ հղիութեան շարունակութիւնը վտանգ է սպառնում հղի կնոջ կյանքին կամ ծանր ֆիսա է նրա առողջութեանը, ինչպես նաև ծնողների ժառանգաբար անցնող ծանր հիվանդութիւնների դեպքում, այն ել միայն հիվանդանոցների ու ծննդաբանների պայմաններում:

2. Հիվանդանոցներից դուրս կամ հիվանդանոցում, բայց վերոհիշյալ պայմանները խախտելով աբորտ կատարելու համար քրեական պատիժ նշանակել—աբորտ կատարող բժշկին՝ մի տարուց մինչև յերկու տարի բանտարկութիւն, իսկ հակասանիտալական պայմաններում կամ հատուկ բժշկական կրթութիւն չու-

նեցող անցանձ կողմից արորտ կատարելու համար քրեական պատիժ նշանակել առնվազն յերեք տարի բանտարկություն:

3. Կնոջն արորտի դրդելու համար քրեական պատիժ նշանակել մինչև յերկու տարի բանտարկություն:

4. Վերոհիշյալ արգելքը խախտելով արորտ կատարող հղի կանանց համար վորպես քրեական պատիժ սահմանել հասարակական պարսավանք, իսկ արորտն արգելելու որենքը կրկին խախտելու դեպքում՝ տուգանք մինչև 300 ռուբլի:

II. Ծննդկաներին պետության կողմից ցույց տրվող նյութական աջակցությունն ավելացնելու յեվ բազմամուկում բնակությունների համար պետական ոգնություն սահմանելու մասին

5. Սոցիալական ապահովագրության որդաններում ապահովագրված թե բանվոր և թե ծառայող ծնողականների նյութական դրությունը բարելավելու նպատակով, այն նպաստի չափը, վորը տրվում է պետական սոցիալական ապահովագրության միջոցներից՝ նորածինների խնամքի անհրաժեշտ առարկաներ ձեռք բերելու համար 32 ռուբլուց հասցնել 45 ռուբլու:

6. Ամսական 5 ռուբլուց 10 ռուբլու հասցնել այն նպաստ, չափը, վորը տրվում է մորը յերեխային կերակրելու համար:

7. Կոոպերատիվ արտեյներին ու ձեռնարկություններին անդամ, չապահովագրված աշխատավոր կանանց համար սահմանել, վոր վերոհիշյալ նպաստները պետք է տան փոխադարձ ոգնության կոոպերատիվ գանձարկիցները՝ նույն հիմունքներով:

8. Վերացնել այն սահմանափակումը, վորն Աշխատանքի Որենսդրով սահմանված է ծառայող կանանց վերաբերմամբ (հոգված 132), հավասարեցնելով նրանց բանվորու հիներին ծնողաբերությունից առաջ և հետո տրվող արձակուրդի յերկարատևությամբ (56 որ ծնողաբերությունից առաջ և 56 որ ծնողաբերությունից հետո):

9. Քրեական պատիժ սահմանել հղիության պատճառով կանանց աշխատանքի ընդունելուց հրաժարվելու համար, նույն պատճառով նրանց աշխատավարձը նվազացնելու համար, որենքով նախատեսնելով, վոր պարտադիր է պահպանել հղի կնոջ նախկին աշխատավարձը, միաժամանակ փոխադրելով նրան ավելի թեթև աշխատանքի, յեղնելով վերջին վեց ամսվա աշխատավարձից:

10. Պետական նպաստ սահմանել բազմանդամ ընտանիք՝ 6 յերեխա ունեցող մայրերին, յուրաքանչյուր հաջորդ յերեխան ծնելիս տարեկան 2000 ռուբլի՝ յերեխան ծնվելուց հետո 5 տարվա ընթացքում, իսկ 10 յերեխա ունեցող մայրերին 5000 ռուբլի պետական միանվադ նպաստ յուրաքանչյուր հաջորդ յերեխան ծնելիս և յերկրորդ տարվանից սկսած՝ 3000 ռուբլի տարեկան նպաստ, վորը վճարվում է հաջորդ չորս տարիների ընթացքում յերեխան ծնվելու որից, տարածելով որենքի այս հոդվածը նաև այն ընտանիքների վրա, վորոնք այս որենքը հրատարակելու մոմենտին ունեն համապատասխան թվով յերեխաներ:

III. Ծննդաբանների ցանցը բնդարձակելու մասին

Հանձնարարել միութենական հանրապետությունների առողջապահության ժողկոմատներին՝

11. Քաղաքներում, արդյունաբերական ու շրջանային կենտրոններում՝ ապրող ծնողականներին հատուկ ծնողաբաններում ծնողաբերական ոգնությամբ լիակատար կերպով ընդգրկելու նպատակով, մինչև 1939 թվականի հունվարի 1-ը կառուցել և շահագործման հանձնել նոր ծնողաբաններ՝ 11.000 մահճակալով, դրանցից՝

1936 թվականին, վորպես լրացում 1936 թվականի պլանում նախագծված	4200 մահճակալի	2000 մահճակալ
1937 թ.		4000 »
1938 թ.		5000 »

12. Գյուղական վայրերում ծնողականներին ցույց տրվող ստացիոնար ծնողաբերական ոգնությունն ավելացնելու նպատակով կառուցել և շահագործման հանձնել նոր ծնողաբաններ՝ 32.000 մահճակալով, վորոնցից պետական բյուջեյի հաշվին՝ 16 հազար մահճակալ՝ գյուղական հիվանդանոցների ծնողաբերական բաժիններում և 16.000 մահճակալ՝ կոլտնտեսային ծնողաբաններ կազմակերպելու միջոցով, դրանց կազմակերպման ծախսի 75 տոկոսը կատարելով կոլտնտեսությունների հաշվին և 25 տոկոսը՝ պետական բյուջեյի հաշվին:

Այդ թվից՝

1936 թ., վորպես լրացում 1936 թվականի պլանով գյուղական հիվանդանոցներում նախագծված 4.300 և կոլտնտեսային ծնողաբաններում նախատեսնված 5000 մահճակալների,

հիվանդանոցներին կից՝ 4.000 մահճակալ

կոլտնտեսային ծննդաբաններին կից 4.000 »

1937 թ. հիվանդանոցներին կից՝ 6.000 մահճակալ և կոլ-

տնտեսային ծննդաբաններին կից՝ 3.000 մահճակալ:

1938 թ. հիվանդանոցներին կից՝ 6.000 մահճակալ և կոլ-

տնտեսային ծննդաբաններին կից՝ 6.000 մահճակալ:

13. Ծննդաբանների ոգնությամբ չապասարկվող ծննդկան-
ներին տանը մանկաբարձական ոգնություն ապահովելու նպա-
տակով մինչև 1939 թվականի հունվարի 1-ը հիմնել 14.400 նոր
մանկաբարձական կետեր: Դրանցից՝

1936 թ. 2.700 մանկաբարձական կետեր գյուղերում և նշանակել

1.370 մանկաբարձուհի կոլտնտեսային նոր ծննդաբաններում:

1937 թ. 5.000 մանկաբարձական կետեր գյուղերում և նշանակել

2.000 մանկաբարձուհի կոլտնտեսային նոր ծննդաբաններում:

1938 թ. 6.700 մանկաբարձական կետեր գյուղերում և նշանակել

2.000 մանկաբարձուհի կոլտնտեսային նոր ծննդաբաններում:

IV. Մանկամուսուկների ցանցն ընդարձակելու մասին

14. Մինչև 1939 թվականի հունվարի 1-ը կրկնապատկել
քաղաքներում, խորհրդային կոլտնտեսային, բանվորական ավան-
ներում ու յերկաթուղային տրանսպորտում մանկական մսուրների
մահճակալների ցանցը, հասցնելով նրանց ընհանուր թիվը
8000-000 մահճակալի, կառուցելով և շահագործման հանձնելով՝

1936 թ. վորպես լրացում 1936 թվականի պլանով

նախատեսված 34.000 մահճակալի՝ 100.000 նոր մահճակալ

1937 թ. 150.000 » »

1938 թ. 150.000 » »

Ընդամենը 400.000 նոր մահճակալ:

15. Գյուղական վայրերում մինչև 1939 թվականի հունվա-
րի 1-ը թե՛ մշտական և թե՛ սեզոնային կոլտնտեսային մսուր-
ներում կրկնապատկել մսուրային մահճակալների ցանցը, ավե-
լացնելով մահճակալների թիվը մշտական մսուրներում 500 հա-
զարով և սեզոնային մսուրներում՝ 4 միլիոնով: Դրանցից՝

1936 թ. մշտական կոլտնտեսային մսուրներում

ի լրացումն 1936 թվականի պլանով նա-

խաղծված 70 հազար մահճակալի՝ 100.000 մահճակալ:

սեզոնային մսուրներում՝ ի լրացումն

1936 թվականի պլանով նախադժված

մի միլիոն մահճակալի՝ 500.000 »

1937 թ. մշտական կոլտնտեսային մսուրներում՝ . . . 200.000 մահճակալ

սեզոնային մսուրներում՝ 1500.000 »

1938 թ. մշտական կոլտնտեսային մսուրներում՝ . . . 200.000 »

սեզոնային մսուրներում՝ 2.000.000 »

Վերսկլյալ ցանցի ծավալման վերահսկողությունը հանձ-
նարարել միութենական հանրապետությունների առողջապահու-
թյան ժողկոմատներին և յերկրամասային, մարզային ու շրջա-
նային գործադիր կոմիտեներին:

16. Քաղաքներում և արդյունաբերական կենտրոններում
1937 թվի հունվարի 1-ից մանկամսուրներում մտցնել յերկհերթ
աշխատանք, որական 16 ժամ, ներառյալ հանգստյան օրերը:

17. Առաջարկել միութենական հանրապետությունների
առողջապահության ժողկոմատներին՝ ապահովել նոր բացված
հիմնարկները համապատասխան կադրերով, բժշկական միջին
անձնակազմ պատրաստելու համար վորպես լրացում 1936 թվա-
կանի հատկացումների բացթողնելով 15 միլիոն ռուբլի:

18. Առաջարկել միութենական հանրապետությունների
առողջապահության ժողկոմատներին, յերեք տարվա ընթացքում
մինչև 1939 թ. հունվարի 1-ը, քաղաքներում արդյունաբերական
ու շրջանային կենտրոններում կառուցել 800 նոր կաթսային
խոհանոցներ՝ մինչև յերեք տարեկան յերեխաներին կերակրելու
համար. սնունդ մատակարարելով այդ խոհանոցներին 1,5 միլիոն
յերեխայի և հիմնելով՝

1936 թ. առաջին կառուցողի 30 խոհանոց (յուրաքանչյուրն 83 հա-
զար ռուբլի արժեքով):
(յուրաքանչյուրը 65 հազ.
ռուբլի արժեքով):

յերկրորդ	»	100	»
1937 թ. առաջին	»	70	»
յերկրորդ	»	200	»
1938 թ. առաջին	»	100	»
յերկրորդ	»	300	»

V. Մանկապարտեզների ցանցն ընդարձակելու մասին

19. Յերեք տարվա ընթացքում յեռապատկել քաղաքներում
գործարանային ավաններում և յերկաթուղային տրանսպորտում
գոյություն ունեցող մշտական մանկապարտեզների գործող
ցանցը, հասցնելով վերջինս (համեմատած մանկապարտեզների

գործող ցանցի 700 հազար տեղի հետ) մինչև 1939 թվականի հունվարի 1-ը 2.100.000 տեղի և խորհանդեսություններում՝ գյուղական վայրերի ձեռնարկություններում ու հիմնարկներում, մինչև 300 հազար տեղի՝ գործող ցանցի 130 հազարի փոխարեն: Այդ նպատակով կառուցել և շահագործման հանձնել՝

1936 թ. բաղաճներում գործարանային ավաններում ու յերկաթուղային տրանսպորտում, ի լրացումն 1936 թվականի պլանով նախագծված 25 հազար տեղի՝ ևս	150.000 տեղ.
Խորհանդեսություններում և գյուղական վայրերի ձեռնարկություններում ու հիմնարկներում մանկապարտեզների թիվը ավելացնելու 1936 թվականի պլան թողնել նախկինը՝	60.000 »
(Ընդամենը)	190.000 տեղ)
1937 թ. քաղաքներում, գործարանային ավաններում ու յերկաթուղային տրանսպորտում հիմնել	300.000 »
Խորհանդեսություններում և գյուղական վայրերի ձեռնարկություններում ու հիմնարկներում՝	60.000 »
1938 թ. բաղաճներում գործարանային ավաններում ու յերկաթուղային տրանսպորտում,	700.000 »
Խորհանդեսություններում և գյուղական վայրերի ձեռնարկություններում ու հիմնարկներում՝	50.000 »

20. Մինչև 1939 թ. հունվարի 1-ը, ի լրացումն գոյություն ունեցող 400 հազար տեղանի ցանցի, կոլտնտեսությունների մշտական մանկապարտեզներում հիմնել 700 հազար տեղ ևս, շահագործման հանձնելով՝

1936 թ. ի լրացումն 1936 թվականի համար նախագծված 150 հազար տեղի, ևս	50.000 տեղ.
(Ընդամենը)	200.000 տեղ)
1937 թ.	240.000 »
1938 թ.	260.000 »

Նույն ժամկետում մանկական սեզոնային նախադպրոցական հրապարակներում ընդգրկել կոլտնտեսությունների բոլոր յերեխաներին: Այդ նպատակով հիմնել՝

1936 թ. (1936 թվականի պլանի համաձայն) հրապարակներ	4.500.000 տեղ
1937 թ.	7.800.000 »
1938 թ.	10.700.000 »

Մանկապարտեզների և գյուղական վայրերի մանկական նախադպրոցական սեզոնային հրապարակների ծավալման վրա վերահսկողություն հաստատելը հանձնարարել միութենական հանրապետությունների լուսժողովմատներին և յերկրային, մարդային ու շրջանային գործադիր կոմիտեներին:

21. Պարտավորեցնել միութենական հանրապետությունների լուսժողովմատներին՝ արդեն 1936 թվականի յերկրորդ կիսամյակում պատրաստել այդ նոր բացվող մանկապարտեզների համար 50 հազար դաստիարակ, բաց թողնելով այդ նպատակով միութենական հանրապետությունների լուսժողովմատների նախահաշիվներով 35 միլիոն ռուբլի, վորպես լրացում այն հատկացումների, վորոնք բաց են թողնված 1936 թվականին նոր մանկապարտեզների համար կադրեր պատրաստելու նպատակով:

V1. Մանկապարտեզների ղեկավարման կազմը փոխելու մասին

22. Փոխել ԽՍՀ Միության Ժողովխորհի 1935 թ. հուլիսի 6-ի վորոշումը (ԽՍՀՄ Որ. Ժող. 1935 թ. № 35, հոդ. 309)՝ բոլոր մանկապարտեզների ղեկավարումն ու կառավարումը միութենական հանրապետությունների լուսժողովմատների սխտեմում կենտրոնացնելու մասին, հանձնելով տնտեսական ժողովմատների հիմնարկների ու ձեռնարկությունների տնտեսությանն այն մանկապարտեզները, վորտեղ պահվում են այդ հիմնարկների ու ձեռնարկությունների բանվորների ու ծառայողների յերեխաները, թողնելով լուսժողովմատների տնորինությանը միայն այն մանկապարտեզները, վորոնք սպասարկում են մանկապարտեզ չունեցող մանր հիմնարկների ու ձեռնարկություններին: Մանկապարտեզների անմիջական ղեկավարությունը հանձնարարել այն ձեռնարկության կամ հիմնարկի վարչությանը, վորին կից գտնվում է մանկապարտեզը, մասնակից դարձնելով ղեկավարման՝ այդ ձեռնարկությունների ու հիմնարկների գործարանային կոմիտեներին և կոմյերիտական կազմակերպություններին: Միութենական հանրապետությունների լուսժողովմատներին վերապահել մանկապարտեզների ընդհանուր մանկավարժական ղեկավարությունը, ցանցի ճիշտ կառուցման վերահսկողությունը և մանկավարժական կադրերի պատրաստումը:

Հանձնարարել ԽՍՀ Միութենական Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին՝ մանկապարտեզների ղեկավարման ու կառավար-

ման համար նոր հաստատված սխեմայի կապակցությամբ, վորոշել մանկապարտեզների հանձնման ու ֆինանսավորման կարգը, ինչպես և նոր մանկապարտեզների կառուցման ու ֆինանսավորման կարգը:

VII. Վերոհիշյալ ձեռնարկումները ֆինանսավորելու մասին

23. Այս վորոշման համաձայն, բացի արդեն 1936 թվականին պետական ու տեղական բյուջեներով և սոցիալական ապահովագրության բյուջեով ծննդաբերական մահճակալների, մանկաբարձական կետերի, մանկամսուրների, կաթնային խոհանոցների ու մանկապարտեզների համար հատկացված 1481,3 միլիոն ռուբլուց, 1936 թվականին լրացուցիչ կերպով բաց թողնել 692,8 միլիոն ռուբլի՝ այդ հիմնարկների ցանցը կառուցելու և ծավալելու համար, հասցնելով 1936 թվականին հատկացումների ընդհանուր գումարը 2174,1 միլիոն ռուբլու՝ 1935 թվականի 875 միլիոն ռուբլու փոխարեն:

Վերոհիշյալ 692,8 միլիոն ռուբլուց հատկացնել՝

ա) քաղաքներում ծննդաբերական մահճակալներ հիմնելու համար	22,2	միլիոն ռուբլի
բ) գյուղերում ծննդաբերական մահճակալներ հիմնելու համար	23,8	» »
գ) քաղաքներում մանկամսուրներ հիմնելու համար՝	320,0	» »
դ) քաղաքներում մանկապարտեզներ հիմնելու համար՝	321,0	» »
ե) կաթնային խոհանոցներ հիմնելու համար՝	9,0	» »

11 տոկոսով շինարարության ինքնարժեքը կրճատելու հաշվով

Ընդամենը՝ շինարարության համար . 596,0 միլիոն ռուբլի

Ոպերատիվ ծախսերի համար՝

ա) նոր հիմնված ծննդաբերական մահճակալները և մանկաբարձական կետերը պահելու համար՝	5	միլիոն ռուբլի
բ) նոր հիմնված մանկամսուրները 1936 թվականի վերջին պահելու համար՝	11,8	միլիոն ռուբլի
գ) նոր հատկացված տարածությունները՝ գործող մանկապարտեզների վերադիրները և այլ թեթև շենքերը, ընակիչներից ազատված շենքերը փոքր նորոգմամբ ոգտադրվելով և մանկապարտեզների համար հարմարեցնելով մանկապարտեզների ներկա ցանցն ընդարձակելու և բարելավելու գործին,	30	» »

Ընդամենը՝ 46,8 միլիոն ռուբլի

Կադրերի պատրաստման համար՝

ա) Առողջապահության ժողովրդական մանկարար-ձուհիների ու բժշկական քույրերի կադրեր պատրաստելու համար՝	15	միլիոն ռուբլի
բ) Լուսավորչական քաղաքային մանկապարտեզների դաստիարակների կադրեր պատրաստելու համար՝	17	» »
գ) Լուսավորչական գյուղական մանկապարտեզների դաստիարակների կադրեր պատրաստելու համար՝	18	» »
Ընդամենը՝	50	միլիոն ռուբլի:

24. Այս վորոշման 5-րդ, 6-րդ և 8-րդ հոդվածների համաձայն ծննդականներին ցույց տրվող ծննդաբերական ոգնությունն ավելացնելու համար հատկացնել 70,5 միլիոն ռուբլի:

25. Առաջարկել ԽՍՀ Միության ժողովրդական կոմիտեների Խորհրդին՝ ապահովել նախագծված շինարարությունն անհրաժեշտ շինանյութերով, այնպես վոր մինչև սույն թվի հուլիսի մեկը ժողովրդատները կարողանան ձեռնամուխ լինել շինարարությանը:

26. Մանկապարտեզների և մանկամսուրների ֆինանսավորման համար մի որինակ հաստատուն կարգ սահմանելու նպատակով, ի փոփոխումն ԽՍՀ Միության ժողովրդատրի 1935 թ. հուլիսի 6-ի այն վորոշման (ԽՍՀ Մ Ռ. Ժ. 1935 թ. № 35, հոդված 310), վորը վերաբերվում է «Մանկամսուրների և մանկապարտեզների պահպանման համար աշխատավարձի Փոնդի $\frac{1}{4}$ 0/0-ի չափով ձեռնարկությունների ու հիմնարկների կատարելիք պարտադիր մուծումներին», 1936 թվականի համար սահմանել ուղղակի հատկացում այդ նպատակով պետական բյուջեից 300 միլիոն ռուբլու գումարով, համապատասխան փոփոխություններ մտցնելով տնտեսական որդանների ու հիմնարկների ֆինանսական պլաններում, այլև պետական սոցիալական ապահովագրության բյուջեից յեկամուտի և ծախքի մասում:

VIII. Արիվմեն չվառելու համար սահմանված բեռնաւն պատժմ ուժեղացնելու յեվ ամուսնալուծութան որենագրություն մեջ փափոխություններ մեցնելու մասին

27. Ի փոփոխումն ամուսնություն, ընտանիքի և խնամակալության վերաբերյալ գործող որենքների, ընտանիքի և ընտանեական պարտականությունների նկատմամբ թեթևամիտ վերա-

Բազմազան մայրերին նպաստ վնասելու կարգի մասին

1. ԽՍՀ Միության Կենտրոնական Ժողովրդական 1936 թ. հունիսի 27-ի «Մայրերին օգնելու, ծնողականներին ցույց տրվող նպաստական օգնությունն ավելացնելու, բազմազան ընտանիք տեղափոխելուն պետական օգնություն սահմանելու, ծնողաբանների, մանկամասերի և մանկապարտեզների ցանցն ընդարձակելու, ալիմենտ չվճարելու համար քրեական պատիժն ուժեղացնելու և ամուսնալուծության որոշումներին մեջ մի քանի փոփոխություններ մտցնելու մասին» վերջին (ԽՍՀՄ Ռ. Ժ. 1936 թ. № 34, հոդ. 309) 10-րդ հոդվածը մի շարք ղեկավարում սխալ կիրառելու կապակցությամբ պարզաբանել, վոր այսուհետև

ա) այն մայրերին, վորոնք որոշքը հրատարակվելու ժամանակ ունեցել են 7, 8, 9, կամ 10 յերեխա, ըստ վորում նրանցից ամենափոքաները յեղել և 5 տարեկանից փոքր, նպաստ անկախ և վճարել սկսած 1936 թվից, ամեն տարի 3 հազար ուրու չափով, մինչև կրտսեր յերեխան 5 տարեկան դառնալը:

բ) այն մայրերին, վորոնք որոշքը հրատարակվելու ժամանակ ունեցել են 11 և ավելի յերեխա, ըստ վորում նրանցից ամենափոքաները յեղել և 5 տարեկանից փոքր, պետք է 1936 թվին միանվագ նպաստ վճարել 5 հազար ուրու չափով և հետագա տարիներին, մինչև կրտսեր յերեխան 5 տարեկան դառնալը, տարեկան 3 հազար ուրու չափով:

2. ԽՍՀ Միության Ֆինանսական Ժողովրդական Կոմիտարի և Ժողովրդական Կոմիտարների խորհուրդների ու գործադիր կոմիտեների նախագահների վրա անձնական պատասխանատվություն չունել, վորպեսզի հետագայում, սկսած 1936 թ. նոյեմբերի 15-ից, բոլոր տեղական մարմինների կողմից ճշտությամբ պահպանվի բազմազան մայրերին նպաստներ վճարելու այն կարգը, վորը սահմանվում և այս վորոշումով (հոդ. 1):

Մոսկվա, Կրեմլ, 1936 թ. նոյեմբերի 14, № 80/1985.

րերմունք ցուցաբերելու դեմ պայքարելու նպատակով, ամուսնալուծություն կատարելիս Չագս հրավիրել բաժանվող յերկու ամուսիններին ել անձամբ և բաժանվողների անձնագրում նշել բաժանումը:

28. Ամուսնալուծության գրանցումների վճարը բարձրացնել հետևյալ չափով—առաջին ամուսնալուծություն՝ 50 ուրուլի, յերկրորդ ամուսնալուծություն՝ 150 ուրուլի, յերրորդ և հաջորդ ամուսնալուծությունները՝ 300 ուրուլի:

29. Ալիմենտ նշանակելիս մի յերեխա պահելու համար գանձել դատի կանչված անձնավորության ստացած աշխատավարձի մի քարորդ մասը, յերկու յերեխա պահելու համար՝ մի յերրորդ և ավելի յերեխա պահելու համար՝ 50 տոկոսը:

30. Կոլտնտեսուհիների համար հաշվարկումը կատարել աշխուրհով, նույն նորմաներով:

Յեթե ալիմենտ ստացող կոլտնտեսուհի մայրն աշխատում և դատի կանչված անձնավորության հետ մի կոլտնտեսության մեջ, պարտավորեցնել կոլտնտեսության վարչությանն անմիջապես նորմա աշխուրհը հաշվելիս հոր ստացած աշխուրհի համապատասխան մասը գրանցել մոր հաշվին (նայած յերեխաների թվին): Յեթե մայրն աշխատում և այլ կոլտնտեսության մեջ, հոր ստացած աշխուրհի համապատասխան մասն աշխուրհը վերջնականապես հաշվարկելիս մոր անվան և գրանցում այն կոլտնտեսության վարչությունը, վորտեղ աշխատում և դատի կանչված անձնավորությունը:

31. Յերեխաներին պահելու նպատակով դատարանի կողմից վորոշված միջոցները չվճարելու համար սահմանված քրեական պատասխանատվություն հասցնել յերկու տարվա բանտարկության, ալիմենտ վճարելուց խուցափող հորը փնտրելու ծախսերը չնել այդ անձնավորության վրա:

ԽՍՀ Միության ԿԳԿ Նախագահ՝ Մ. Կալինին

ԽՍՀ Միության ԺԿԽ Նախագահ՝ Վ. Մոլոտով

ԽՍՀ Միության ԿԳԿ քարտուղարի պաշտոնակատար Ի. Ունցիլիս

Մոսկվա, Կրեմլ, 1936 թ. հունիսի 27, № 65/1134

Հրապարակ. «Իզվեստիա» թրգան ԽՍՀ Միության ԿԳԿ և ՀԿԳԿ, № 149, 1936 թ. հունիսի 28

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Բազմազավակ մայրերին պետական նպաստ նշանակելու ու վճարելու
կարգի մասին.

1. Ընդհանուր հիմունքներ

1. Պետական նպաստ տրվում է յուրաքանչյուր այն մորը,
վորն ունի ամենապակասը յոթ յերեխա, վորոնցից կրտսերը
հինգ տարեկանից փոքր է:

Հաշվի չեն առնվում տվյալ մոր բոլոր յերեխաները (մի
հորից, կամ մի քանի հայրերից) անկախ նրանց հասակից, և
անկախ նրանից, թե ապրում են արդյոք մոր հետ, թե առանձին:

Հաշվի չեն առնվում մեռած յերեխաները, ինչպես նաև
խորթ, վորդեգրած և ոտարահպատակ յերեխաները:

2. 1936 թվի հունիսի 27-ից առաջ ծնված յերեխաների
համար նպաստը վճարելիս առաջին տարին, վորի համար վճար-
վում է նպաստը, հաշվվում է 1936 թ. հունիսի 27-ից (ԽՍՀՄ
կենտգործկոմի ու Ժողկոմխորհի վորոշման հրատարակման որը)
մինչև 1937 թ. հունիսի 26-ը:

Վերջին տարվա համար, այսինքն՝ այն տարվա, յերբ լրա-
նում է յերեխայի հինգ տարին, նպաստը վճարվում է միայն այն
դեպքում, յերբ տվյալ թվի հունիսի 26-ից մինչև այն որը, յերբ
լրանում է յերեխայի հինգ տարին մնում է ամենապակասը
վեց ամիս:

3. 1936 թվի հունիսի 27-ից հետո ծնված յերեխաների հա-
մար նպաստ վճարելիս, առաջին տարին, վորի համար վճարվում
է նպաստը համարվում է յերեխայի ծննդյան ուրից, ըստ վորում
յերկրորդ տարվա համար նպաստի վճարումը կատարվում է յե-
րեխայի ծննդից հետո մեկ տարի անց:

4. Պետական նպաստի վճարումը դադարեցվում է.

ա) այն յերեխայի մահվան դեպքում վորի համար նշանակ-
ված է նպաստը.

բ) բազմազավակ մոր այլ յերեխաներից վորեն մեկ մահ-
վան դեպքում, յեթե դրա կապակցութամբ կենդանի մնացած
յերեխաների թիվն յոթ հորեց պակաս է լինում:

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԽՍՀ ՍՈՒՄԱՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Բազմազավակ մայրերին պետական նպաստ նշանակելու յեւ
վճարելու վերաբերյալ հրահանգը հաստատելու մասին.

ԽՍՀ Միության Ժողովրդական կոմիսարների Խորհուրդը
վորոշում է՝

Հաստատել բազմազավակ մայրերին պետական նպաստ նշա-
նակելու ու վճարելու կարգի վերաբերյալ՝ ԽՍՀ Միության Առող-
ջապահության Ժողովրդական կոմիսարի կողմից ներկայացրած
հրահանգը (կցվում է):

ԽՍՀ Միության Ժողովրդների Նախագահ Վ. Մարտով

ԽՍՀ Միության Ժողովրդների գործերի
կառավարիչ՝ Մ. Մարտովով

Մոսկվա, հրեմբ. 22 մայիսի 1937 թ.
№ 828:

1257
0101



Տասնմեկ և ավելի յերեխա ունեցող մորը, յերբ յերեխաներից վորեւ մեկի մահվան հետեանքով յերեխաների ընդհանուր թիվը կլինի տասնմեկից պակաս, բայց վեցից ավելի (և վորոնց թվում կմնա հինգ տարեկանից փոքր յերեխա) պետական նպաստի չափը պակասում և ԽՍՀՄ Կենտրոնական ԽՍՀ-ի Ժողովուրդների 1936 թ. հունիսի 27-ի վորոշման 10-րդ հոդվածի համաձայն (ԽՍՀՄ Որ. Ժող. 1936 թ., № 34, հոդ. 309):

5. Մոր մահվան դեպքում նպաստի վճարումը դադարեցվում և: Իսկ յեթե մայրը մեռել և նպաստը նշանակելուց հետո, բայց առաջին տարվա նրա վճարումից առաջ, ապա առաջին տարվա նպաստը, վորպես միանվագ, վճարվում և հորը կամ այն անհայտ, վորոնց խնամքի տակ մնացել են տվյալ մոր յերեխաները, իսկ հետագա նպաստի վճարումը դադարեցվում և:

6. Նոր նշանակված կամ հերթական նպաստը մեկ տարվա ընթացքում չպահանջելու դեպքում, համապատասխան գումարները յենթակա չեն վճարման:

II. Պետական ցպասը նշանակելու մասին դիմումներ տալու կարգի յով այդ ցպասը նշանակելու մասին.

7. Պետական նպաստի վճարման վերաբերյալ դիմումը տալիս և մայրը, գրավոր ձևով անձամբ կամ փոստով մոր բնակավայրի քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՁԱԳՍ-ի) շրջանային կամ քաղաքային բյուրոյին:

Դիմումի մեջ պետք և ճշտորեն հիշատակված լինեն տվյալ մոր բոլոր յերեխաների անունները, հայրանունները և աղգանունները ու նրանց հասցեները:

8. Դիմումին անպայման պետք և կցված լինեն դիմումի մեջ հիշատակված յերեխաներից յուրաքանչյուրի իսկական ծննդյան վկայականները (մետրիկները):

Յերբ իսկական վկայականը կորցրված և, կարելի չե ներկայացնել՝ նոտարի կամ նրան փոխարինող որդանի կողմից վավերացված պատճենը:

Յերբ հնարավոր չե ներկայացնել յերեխաներից յուրաքանչյուրի ծննդյան իսկական վկայականը, կամ այդ վկայականի վավերացված պատճենը, տվյալ յերեխան մորը պատկանելու փաստը պետք և հաստատված լինի մոր բնակավայրի Ժողովրդական դատարանի կողմից, վորը համապատասխան վորոշում և կայաց-

նում վկաների ցուցմունքների կամ այլ տվյալների հիման վրա: Բացի դրանից, դիմումին անպայման պետք և կցված լինեն գյուղական վայրերում գյուղխորհրդի նիստի արձանագրությունը, իսկ քաղաքային վայրերում Բանվոր-Գյուղացիական Միլիցիայի որդանի կողմից տրված տեղեկանքը, վորը վկայում և տվյալ մոր յերեխաների թիվը, վորոնք կենդանի չեն և ապրում են նրա հետ՝ հիշատակելով այդ յերեխաների տարիքը:

Առանձին ապրող յերեխաների համար մայրը տեղեկանքներ պետք և ներկայացնել նրանց կենդանի լինելու մասին, այդ յերեխաների բնակավայրի Բանվոր-Գյուղացիական Միլիցիայի որդաններից կամ գլխավորական մասից, յեթե նրանք գտնվում են Կարմիր Բանակում:

Տեղեկանքները պետք և թվարկված լինեն վոչ ավելի վաղ, քան դիմումը տալու օրից յերեք ամիս առաջ:

9. ՁԱԳՍ-ի շրջանային կամ քաղաքային բյուրոն պարտավոր և դիմումն ընդունելու ժամանակ անձամբ ստուգել նրա բովանդակությունը, հարց ու փորձ անելով դիմում տվողին:

Դիմումի կամ նրան կցված փաստաթղթերի իսկության վերաբերյալ կասկածներ ծագելու դեպքում ՁԱԳՍ-ի բյուրոյի աշխատողը պարտավոր և ստուգել այն, տեղեկություններ քաղելով ՁԱԳՍ-ի որդանների գրքերում և արխիվներում: Բացի դրանից, անհրաժեշտության դեպքում ստուգումը կատարվում և.

ա) քաղաքներում—հարցաքննելով դիմողի բնակավայրի տնային վարչություններին կամ վկաներին, կազմելով այդ մասին արձանագրություն ՁԱԳՍ-ի քաղաքային բյուրոյի աշխատողի համապատասխան տնային վարչության ներկայացուցչի և հարցաքննված անձանց ստորագրությամբ:

բ) գյուղական վայրերում—ՁԱԳՍ-ի շրջանային բյուրոյի ներկայացուցչի գյուղը մեկնելու և հարցը գյուղխորհրդի նիստում դնելու միջոցով: Գյուղխորհրդի նիստի արձանագրության պատճենը՝ վավերացված նախագահի ու քարտուղարի ստորագրություններով և գյուղխորհրդի կնիքով, հանձնվում և ՁԱԳՍ-ի շրջանային բյուրոյին նախատ նշանակելու վերաբերյալ նյութերին կցելու համար:

10. Կատարած ստուգման հիման վրա ՁԱԳՍ-ի շրջանային կամ քաղաքային բյուրոն տվյալ մոր դիմումի վերաբերյալ կազ-

մում և յեզրակացություն՝ ԽՍՀ Միութեան Ներքին Գործոց Ժողովրդական Կոմիսարիատի կողմից հաստատված ձևով և մոր դիմումի ու բոլոր փաստաթղթերի հետ միասին ուղարկում շրջանային գործադիր կոմիտեին կամ քաղխորհրդին՝ ըստ պատկանելության, պետական նպաստ նշանակելու հարցը քննելու համար:

11. Շրջանային գործադիր կոմիտեն կամ քաղաքային խորհուրդն իրենց նիստում ՁԱԳՍ-ի բյուրոյի վարիչի ղեկուցումով քննում են ստացած դիմումն ըստ ելության: Շրջանային Գործադիր կոմիտեի նիստում այդ հարցերի քննութեան համար կանչվում են համապատասխան գյուղխորհուրդների նախագահները:

Շրջանային գործադիր կոմիտեի կամ քաղաքային խորհրդի նիստում անպայման ներկա յեն լինում և իրենց յեզրակացությունն են տալիս շրջանային ֆինբաժնի և շրջանային առբաժնի վարիչները:

Կասկածանքների դեպքում շրջանային գործադիր կոմիտեն կամ քաղաքային խորհուրդը նշանակում և մոր դիմումի յերկրորդ ստուգումը:

Շրջանային գործադիր կոմիտեի կամ քաղաքային խորհրդի վորոշումը պետական նպաստ նշանակելու կամ նպաստը մերժելու վերաբերյալ գրանցվում և արձանագրութեան մեջ, վորը բոլոր անհրաժեշտ նյութերի հետ կցված ուղարկվում են՝ մարզային բաժանում չունեցող միութենական հանրապետութեան կամ ավտոնոմ հանրապետութեան Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին, յերկրային կամ մարզային գործադիր կոմիտեին՝ ըստ պատկանելուն:

12. Մարզային բաժանում չունեցող միութենական հանրապետութեան Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը կամ յերկրամասային, մարզային գործադիր կոմիտեն քննում և շրջանային գործադիր կոմիտեների ու քաղաքային խորհուրդների՝ հաստատման համար ստացված վորոշումները միութենական կամ ավտոնոմ հանրապետութեան Ներքին Գործոց Ժողովրդական Կոմիսարի կամ Ներքգործողկոմատի յերկրամասային (մարզային) վարչութեան պետի ղեկուցումներով, վորոնք ստացած նյութերի հիման վրա յեզրակացութեան են տալիս այն մասին, թե համապատասխանում և արդյոք շրջանային գործադիր կոմիտեի կամ քաղաքային խորհրդի վորոշումը ԽՍՀՄ Կենտրոնական և Ժողկոմխորհի 1936 թ. հունսի 27-ի վորոշմանն ու այս հրահանգին:

13. Միութենական կամ ավտոնոմ հանրապետութեան Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի, յերկրամասային կամ մարզային գործադիր կոմիտեի վորոշումն ուղարկվում և ՁԱԳՍ-ի հանրապետական, յերկրամասային, կամ մարզային որդաններին ֆինանսների և առողջապահութեան որդաններին, ինչպես նաև համապատասխան շրջանային գործադիր կոմիտեի կամ քաղաքային խորհրդին և բաղմաղավակ մորը:

Նպաստ նշանակելու վերաբերյալ վորոշման համար հիմք ծառայած բոլոր փաստաթղթերը վերադարձվում են ՁԱԳՍ-ի շրջանային կամ քաղաքային բյուրոյին ըստ պատկանելուն և պահպանվում են խիստ հաշվառման տակ:

14. Շրջանային գործադիր կոմիտեն կամ քաղաքային խորհուրդը պարտավոր և միութենական կամ ավտոնոմ հանրապետութեան Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի, յերկրամասային կամ մարզային գործադիր կոմիտեի՝ նպաստ նշանակելու վերաբերյալ վորոշումը ստանալուց հետո անհապաղ հրապարակել տեղական թերթում պաշտոնական ծանուցում տվյալ մորը պետական նպաստ նշանակելու մասին, հիշատակելով նպաստի չափը, մոր անունը, հայրանունը, աղդանունը և բնակութեան վայրը և նպաստը նշանակելու ժամանակ հաշվի առնված նրա զավակների անվանական ցուցակը:

III. Պետական նպաստ վճարելու կարգի մասին

15. Միութենական կամ ավտոնոմ հանրապետութեան Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի, յերկրամասային կամ մարզային գործադիր կոմիտեի՝ պետական նպաստ նշանակելու վերաբերյալ վորոշման հիման վրա, միութենական կամ ավտոնոմ հանրապետութեան Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատը, յերկրամասային կամ մարզային ֆինբաժնի դուրս և գրում մոր անունով յուրաքանչյուր յերեխայի համար պետական նպաստ ստանալու իրավունքին հատուկ անձնական գրքույկ:

Այդ գրքույկի տիպարը սահմանում և ԽՍՀ Միութեան Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատը՝ ԽՍՀ Միութեան Առողջապահութեան Ժողովրդական Կոմիսարիատի և ԽՍՀ Միութեան Ներքին Գործոց Ժողովրդական Կոմիսարիատի հետ համաձայնեցնելուց հետո:

Պետական նպաստ ստանալու իրավունքի անձնական գրքույկը ուղարկվում և համապատասխան շրջանային գործադիր

Հոմիտեյին կամ քաղաքային խորհրդին բաղմազավակ մորը հանձնելու համար:

16. Շրջանային գործադիր կոմիտեն կամ քաղաքային խորհուրդը անձնական գրքույկը բաղմազավակ մորն և հանձնում էր նրան:

Անձնական գրքույկը ստանալու ժամանակ մայրը պարտավոր է ստորագրութիւն տալու այն մասին, վոր նպաստը նշանակելիս հաշվի առնված նրա բոլոր յերեխաները այդ գրքույկը ստանալու մոմենտին կենդանի չեն և վոր նա նախագրողացված է այն պատասխանատուության մասին, վորին ինքը յենթարկվում է սխալ տեղեկութիւններ տալու համար:

17. Պետական նպաստը բաղմազավակ մորը վճարվում է իր մշտական բնակավայրի քաղաքային կամ շրջանային ֆինբաժնում՝ անձնական գրքույկը ներկայացնելուց հետո:

Նպաստը յուրաքանչյուր անգամ վճարվում է տարեկան լրիվ գումարով:

Նպաստը ժամանակին և ճիշտ վճարելու պատասխանատուութիւնը դրվում է միութենական կամ ավտոնոմ հանրապետութեան ֆինանսների ժողովրդական կոմիտեի ատի յերկրամասային կամ մարզային ֆինանսական բաժնի վրա՝ ըստ պատկանելույն:

18. Յերկրորդ և հաջորդ տարիների համար պետական նպաստ ստանալու ժամանակ բաղմազավակ մայրը պետք է կրկին քաղաքային կամ շրջանային ֆինբաժնին ներկայացնի ՁԱԳՄ-ի շրջանային կամ բյուրոյի տեղեկանքն այն մասին, վոր կենդանի չեն նրա այն բոլոր յերեխաները, վորոնք հաշվի չեն առնված նպաստը նշանակելիս:

ՁԱԳՄ-ի շրջանային կամ քաղաքային բյուրոն այդ տեղեկանքը տալիս է միայն նրանից հետո, յերբ մայրը ներկայացնում է 8-րդ հոդվածում հիշատակված արձանագրութիւններն ու տեղեկանքները:

19. Միութենական և ավտոնոմ հանրապետութիւնների ժողովրդական կոմիտեների խորհուրդների նախագահները և յերկրամասային ու մարզային Գործադիր կոմիտեների նախագահները պարտավոր են ապահովելու, վոր բաղմազավակ մորը նպաստ նշանակելու յուրաքանչյուր գործ ավարտվի վոչ ուշ, քան 3 ամսվա ընթացքում՝ սկսած այն օրից, յերբ մայրը ՁԱԳՄ-ի շրջանային կամ քաղաքային բյուրոյին դիմում է ներկայացրել:

մինչև այն օրը, յերբ մորը հայտարարութիւնն և ուղարկվում նրան նպաստ նշանակելու. կամ նպաստը մերժելու մասին:

20. Միութենական և ավտոնոմ հանրապետութիւնների ժողովրդական կոմիտեների խորհուրդի նախագահները և յերկրամասային ու մարզային գործադիր կոմիտեների, շրջանային գործադիր կոմիտեների ու քաղաքային խորհուրդների նախագահներն անձնական պատասխանատուութիւն են կրում բաղմազավակ մայրերին՝ խՍՀՄ Կետգործկոմի ու ժողկոմխորհի 1936 թվի հունիսի 27-ի վորոշման և այս հրահանգի համաձայն բաղմազավակ մայրերին պետական նպաստ նշանակելու ու վճարելու համար:

21. խՍՀՄ Առողջապահութեան ժողովրդական կոմիտեի ատի ու տեղական օրգանների վրա յե դրվում այս վորոշման ճիշտ կատարման վերահսկողութիւնը:

ԽՍՀ Միութեան Առողջապահութեան
Ժողովրդական կոմիտե՝ Գ. Կամիսնի



Տէր. ձեռնորդ և սրբազրէջ՝ Խ. Վաչե

Քյուղերտի տպարան, Յերևան, Նալբանդյան 11
Գրավւիտի լիազոր №1194, պատմեր 572, տիրաժ—3000

849

Законы
о выдаче госпособия
многодетным матерям
(с приложениями законодательства по 22 мая 1937 г.)
Издатель СНК Армянской ССР

ՀՀ Ազգային գրադարան



NL0221370

43. 278